**Շրջակա միջավայրի նախարարության**
**Գլխավոր քարտուղար պարոն Գ.Գույանին**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Քաղաքացիական ծառայողի/ծառայողների անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը**
Նարինե Հակոբյան (հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ):

**2. Գործուղման վայրը  ժամկետները**
Իսպանիայի Թագավորություն, քաղաք Մադրիդ, 2023 թվականի ապրիլի 21-23:

**3. Հրավիրող կողմը**
ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարություն

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**.

ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի (UNCCD) Կողմերի համաժողովի 15-րդ նստաշրջանից (COP 15) հետո վերաձևավորվեց Երաշտի հարցերով միջկառավարական աշխատանքային խումբը (IWG on drought), որի նպատակն է բացահայտել և գնահատել գլոբալ քաղաքականության գործիքները, տարածաշրջանային քաղաքականության շրջանակները և ազգային պլանները՝ արդյունավետորեն կառավարելու երաշտը և աջակցելու երաշտի ռեակտիվ կառավարումից անցմանը պրոակտիվ կառավարման:

**5. Քննարկված թեմաները**

Երաշտի հարցերով աշխատանքային խումբը իր մանդատի շրջանակներում մշակում է երաշտի ազդեցություններին ուղղված քաղաքականություն և առաջադրում իրականացման միջոցառումներ՝ Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի շրջանակներում:

Հանդիպման ընդացքում աշխատանքային խմբի անդամների կողմից առաջադրվեց ստորև ներկայացված քաղաքականության մշակման 8 բաղադրիչներով մոդելը՝ հետագա զարգացման և գնահատման համար.
1. Ֆինանսական տարբերակներ.
ա) ֆինանսավորման նոր գործիքների ստեղծում.

բ) գոյություն ունեցող մեխանիզմների (ԳԷՀ, ԳՄ) հզորացում.
2. Տեխնիկական տարբերակներ.
ա) Սահմանել գլոբալ թիրախ.
բ) Ստեղծել գլոբալ աշխատանքային ծրագիր.
3. Իրավականորեն պարտադիր տարբերակներ.
ա) Կոնվենցիայի փոփոխություն.
բ) Արձանագրություն կամ համաձայնագիր.
4. Ոչ իրավական պարտադիր տարբերակներ.
ա) Կոնվենցիայից դուրս (UNEA և/կամ GA) փաստաթղթեր.
բ) Կոնվենցիայի ներսում գտնվող փաստաթուղթ (COP որոշում, հռչակագիր)

Ընդունվեց գնահատման սխեմա՝ չափորոշիչներով և քննադատական հարցերով, ինչպես նաև SWOT վերլուծությամբ:

Քաղաքականության 8 տարբերակների գնահատումը նախապատրաստելու համար աշխատանքային խմբի անդամներից ձևավորվեց 8 թիմ:
Հավելված V-ի (Annex V) երկրների (Հայաստան, Վրաստան, Բելորուս) ներկայացուցիչները միացան տեխնիկական տարբերակների (ա և բ) գնահատմանը:

**6. Հանդիպումները, ելույթները.**

Չիլիի ներկայացուցչից առաջարկ է ստացվել IWG5 հանդիպումն անցկացնել Չիլիում, որոշման հաստատումը կլինի ավելի ուշ:

**7.Հանդիպմների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Աշխատանքային խմբի կողմից առաջադրվեց Կոնվենցիայի իրականացման վերանայման հանձնաժողովի (CRIC 21)-ի հաշվետվության հետևյալ կառուցվածքը.
Ներածություն
Նույնականացման և ընտրության տարբերակներ
ա. Հիմնվելով առաջին IWG-ի աշխատանքի վրա
բ. IWG անդամների ներկայացումները
գ. Գնահատման տարբերակների ընտրություն
Քաղաքականության տարբերակներ հետագա քննարկման համար
Գնահատման մեթոդիկա
ա. Ներածություն
բ. Ուղղորդող հարցեր
գ. SWOT վերլուծություն
Հետագա անելիքներ
ա. Ընտրանքներ

բ. Գնահատման սխեմա
գ. Զեկույցի պատրաստում COP 16-ի համար

Որոշվել են  աշխատանքի հետագա քայլերը.
- IWG-ի զեկույցի պատրաստում CRIC 21-ի համար մինչև հուլիսի 15-ը (Քարտուղարությունը շուտով կներկայացնի այս զեկույցի նախագիծը IWG-ի անդամների քննարկմանը);
- գնահատում 8 քաղաքական տարբերակներից բաղկացած թիմերի կողմից մինչև CRIC 21;
- Ուզբեկստանում CRIC 21-ից անմիջապես հետո IWG-ի 4-րդ հանդիպման անցկացումը.
- IWG 5-րդ ժողովի անցկացումը 2024 թվականի 1-ին կիսամյակում:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Որոշվել են  աշխատանքի հետագա քայլերը.
- IWG-ի զեկույցի պատրաստում CRIC 21-ի համար մինչև հուլիսի 15-ը (Քարտուղարությունը շուտով կներկայացնի այս զեկույցի նախագիծը IWG-ի անդամների քննարկմանը);
- գնահատում 8 քաղաքական տարբերակներից բաղկացած թիմերի կողմից մինչև CRIC 21;
- Ուզբեկստանում CRIC 21-ից անմիջապես հետո IWG-ի 4-րդ հանդիպման անցկացումը.
- IWG 5-րդ ժողովի անցկացումը 2024 թվականի 1-ին կիսամյակում:

Գործուղվող՝  Նարինե Հակոբյան
6/28/2023